ԸՆՏԱՆԻՔԻ ՁԵՎԵՐԸ, ԿԱԶՄԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմության մատերիալիստական ըմբռնման համաձայն յուրաքանչյուր արտադրաեղանակին համապատասխանում են ընտանեկան որոշակի հարաբերություններ։ «Հասարակական կարգերը,— գրում է Ֆ. Էնգելսը,— որոնց մեջ ապրում են որոշ պատմական դարաշրջանի և որոշ երկրի մարդիկ, պայմանավորվում են... մի կողմից՝ աշխատանքի զարգացման աստիճանով, մյուս կողմից՝ ընտանիքի զարգացման աստիճանով»[1]։ Նա նշում է, որ «քաղաքակրթությանը համապատասխանում և նրա հետ միասին վերջնականապես իր տիրապետությունն է հաստատում ընտանիքի նոր ձևը՝ մենամուսնությունը, տղամարդու իշխանությունը կնոջ վրա և անհատական ընտանիքն իբրև հասարակության տնտեսական միավոր»[2]։

Ո՞րն էր ընտանիքի տիրապետող ձևը վաղ ֆեոդալական Հայաստանում։

Ընտանիք հասկացությունը հարազատ է եղել հետազոտվող դարաշրջանին՝ իբրև հասարակության բջիջ։ Նյութերը հավաստում են, որ ընտանիքին հոմանիշ հասկացություններ էին երդը, տունը և ծուխը։ Երդը և տունը հավասարապես կիրառվել են և՛ քաղաքային, և՛ գյուղական, մինչդեռ ծուխը՝ գյուղական ընտանիքը իմաստավորելու համար։

Հայկազյան բառարանում երդը ստուգաբանված է՝ «լայնաբար՝ իբր տուն, յարկ. եւ անձինք տան. եւ օճաղ»։ Ստորև բերվող պատմական և կանոնական աղբյուրներից երևում է, որ երդը արտահայտում էր գյուղի և քաղաքի փոքր ընտանիքի գաղափար։ Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ III-ը «գրեաց չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն»[3]։ Նկարագրելով Հայաստանի քաղաքների՝ Արտաշատի, Երվանդաշատի, Վաղարշապատի, Զարեհավանի, Զարիշատի, Վանի և Նախիջևանի ավերումը և նրանց բնակիչների բռնի տեղահանությունները պարսից Շապուհի կողմից, Բուզանդը իր պատմության մեջ ամենուրեք օգտագործել է երդ բառը։ Օրինակ՝ Արտաշատից տեղահանվեցին «քառասուն հազար երդ հայ», «ինն հազար տուն երդ հրեայս», Երվանդաշատից՝ «երդս քսան հազար հայ, և երդս երեսուն հազար հրեայ» և այլն[4]։

Հայոց կանոնագրքում[5] երդը հանդիպում է ընդամենը երկու անգամ՝ Սա-

---

1 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 4։

2 Նույն տեղում, էջ 246։

3 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 423։

4 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 171—172։

5 «Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի», գիրք Ա, Երևան, 1964, գիրք Բ, Երևան, 1971։ Այսուհետև Կանոնագրքից քաղվածքները բերվելու են նշվելով կանոնախումբը և կանոնը։

հակ Պարթևի և Ներսեսի ու Ներշապուհի կանոնախմբերի համապատասխանաբար՝ ԺԹ և ԺԴ կանոններում։ Առաջինի համաձայն գյուղի գլխավոր քահանան՝ «Բ երդ աւելի առցէ, քան զիւր ընկերսն, թէ գեաւղ մեծ իցէ»։ Ըստ երկրորդին՝ «զպտուղս եւ զմուտս ժողովրդականք միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուսցեն... եւ մի՛ ըստ դասուց բաժին եւ երդոց, որ եղեւ վնաս»։ Դիտելի է, որ «Աւրէնք յաղթող թագաւորացումն»[6] երդը չի հանդիպում։ Այստեղ համապատասխան հոդվածներում օգտագործված են տուն և ընտանիք տերմիններ։

Տունը աշխարհիկ և կանոնական աղբյուրներում առավել հաճախ արտահայտում է ընտանիք իմաստը։ Ի դեպ, Հ. Աճառյանը նշում է, որ ընտանիք բառն իր հիմքում ունի տուն արմատը։ «Ընտանիքը» ծագել է «ըն(դ) նախդիրով տուն բառից»[7]։

Ակադեմիկոս Ի. Ջավախիշվիլին հետաքրքիր ստուգաբանություն է տվել տուն բառին։ Արդարացի է նրա նշումը, որ տունը ունեցել է բազմանշանակ գործածություն, նշանակել է՝ արենակցական կապերով կապված անձանց շրջան, տուն, բնակելի շինություն, տերիտորիա, որը զբաղեցնում էր և ուր ապրում էր ընտանիքը, ընտանիքի կամ տոհմի կալվածք, նախարարի իշխանության ներքո գտնվող գավառ, երկիր, պետություն։ Անվանի գիտնականը գտնում է, որ «տուն» բառից չի երևում՝ ապրում է՞ր, արդյոք, այնտեղ տոհմ կամ մեկ ընտանիք, որ «տուն» հասկացության լրիվ բովանդակությունը դեռևս պարզաբանման կարոտ է[8]։ Է. Կարապետյանի կարծիքով վաղ ֆեոդալական Հայաստանում հասարակության տնտեսական բջիջն էր փոքր ընտանիքը, իսկ սոցիալական կազմակերպման հիմնական ձևը՝ գյուղական կամ տերիտորիալ համայնքը, որը չէր բացառում ազգակցական կապերով պայմանավորված այլ հարաբերությունների գոյությունը[9]։ Ինչ վերաբերում է տուն բառին, նա գտնում է, որ տնային ստրկության ծագումից առաջ տունն օգտագործվում էր արենակցական խմբի իմաստով, նշանակելով ավելի լայն ազգակցական միավորում՝ տոհմ, պատրոնիմիա, իսկ ապա՝ մեծ և անհատական ընտանիք[10]։ Հետագայում այդ տերմինին փոխարինում է գերդաստանը՝ ստրկատիրական ընտանիքի իմաստով, որի գոյությունը եղել է կարճատև, քանի որ ստրկատիրությունը Հայաստանում ունեցել է կարճ կյանք։ Ընտանիքի այդ ձևի վերացմամբ «գերդաստան» տերմինը անհետանում է և վերածնունդ է ապրում տունը. արդեն ոչ թե մեծ, այլ անհատական ընտանիքի իմաստով[11]։

Ինչ չափով են հիմնավորված վերոհիշյալ եզրակացությունը կանոնական և աշխարհիկ իրավունքների նորմերով։

Ի տարբերություն երդի, որն, ինչպես նկատեցինք, «Հայոց կանոնագրքում» ներկայացված է երկու անգամ, տունը հանդիպում է մշտապես, տարբեր կանոնախմբերում, հատկապես՝ մեր ազգային կանոնախմբերում, տարբեր

---

6 «Ասորական Դատաստանագիրք, ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեաց Արսէն Ղլտճեանց», էջմիածին, 1917։

7 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ, գիրք, էջ 1061։

8 Н. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, т. I, СПб, 1905, էջ 84—89։

9 Տե՛ս Э. Т. Карапетян, Родственная группа «Азг» у армян, Ереван, 1966, էջ 6։

10 Э. Т. Карапетян, Армянская семейная община, Ереван, 1958, էջ 59։

11 Նույն տեղում, էջ 67—68։

իմաստով և սոցիալական տարբեր դասերի առնչությամբ։ Նրանցից կարելի է եզրակացնել, որ տունը ընդհանրապես օգտագործվում էր իբրև ընտանիք, առավելապես՝ անհատական, թեև չենք բացառում մեծ ընտանիքի գաղափարը, չնայած ուղղակի ապացույցներ չենք տրամադրում։

Այսպես, Հայոց կանոնագրքում ոչ հաղվադեպ հանդիպում է քահանայի տուն արտահայտությունը. «Մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց առնուլ պատարագիք... եթէ իցէ ոք որ առցէ ի տուն իւր...», «...եւ անձամբ մի՛ աւրհնեսցեն ի տունս իւրեանց», «Եւ պանդուխտք, որ ի տունս քահանայիցն իցեն...» (տե՛ս Սահակայ Պարթևի՝ ԺԸ, Ի, ԽԱ)։ Կամ՝ «Եւ աղախին պոռնիկ ի քահանայի տան մի՛ լիցի», «Եթէ յընտանեաց դուստր քահանայի ի պոռնկութեան գտանիցի... ի քահանայական տանէն ի բաց ելցէ» (տե՛ս Շահապիվանի՝ Բ)։ Ներսէսի և Ներշապուհի կանոնախմբում կարդում ենք. «...սպասք սրբոյ եկեղեցւոյն ի գլխաւոր քահանայի տան եղիցի... եւ ինքն գլխավոր քահանայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողուլ եւ գործոյ տան պարապել», «Քահանայք... մի՛ արծաթագին աղախնայս ստանալ եւ կամ ի կապինաց պոռնկաց ի տունս տանել զգարշելիսն...», «Իսկ մոնազունք եւ վանաց մանկունք վանս մի՛ ոք իշխեսցեն ուրեք ունել բայց ի վանս. ապա եթէ վանք չկան՝ յաւագ երիցուն տուն երթիցեն...» (տե՛ս ԺԴ, ԼԲ, ԼԴ կանոնները)։

Առանձին կանոններում հանդիպում են՝ «տուն ազատի», «տուն իշխանի», «տուն նախարարի» և «տուն տէրանցն» արտահայտությունները, որոնք ընկալվում են իբրև իշխողների ընտանիք։ Այսպես, նրանցից մեկում կարդում ենք. «Ծառայս ի ժառանգաւորութիւն ընձեռել առանց տէրանցն կամաց՝ ոչ հրամայեմք ի տրտմութիւն ստացողացն, քանզի տանցն կործանումն է այս գործ» (Երկրորդ Առաքելական՝ ՀԶ)։ Կամ՝ «Քահանայ այր... յազատաց տունս, յիշխանի տունս ի դայեկութիւն եւ յայլ գործակալութիւն մի՛ իշխեսցեն առնել...» (Սահակայ Պարթևի՝ ԻԲ), «Եթէ ի նախարարի տան գտցին պղծութիւնք, կամ՝ կին նորա կամ դուստր կամ որդի կամ ինքն իսկ գլխովին, եւ ոչ զընտանիսն ի ձեռս տացէ եպիսկոպոսացն...» (Շահապիվանի՝ Ի)։ Վերջինից պարզորոշ երևում է, որ տունը օգտագործվել է իբրև ընտանիքի, այն էլ փոքր ընտանիքի հոմանիշ։ Դա երևում է այդ ընտանիքի կազմից, որը բաղկացած էր ամուսիններից, դուստրերից և որդիներից։ Ընտանիքի այսպիսի կազմը և այլ մասնավոր աղգականների թվարկման բացակայությունը ցույց է տալիս, որ տուն ասելով հասկացվել է նաև ամուսիններից և զավակներից բաղկացած փոքր անհատական ընտանիք։

«Կանոնագիրք Հայոցում» ոչ սակավ հանդիպում են՝ «տուն շինականի», «տուն ժողովրդի» և «տուն աշխարհականի» արտահայտությունները՝ դարձյալ ընտանիքի իմաստով. «...մի՛ իշխեսցեն աւրէնս ի տունս շինականաց տանել...», «Նոյնպէս եւ շինականք... յառաջ քան զպատարագն մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուտել և ըմպել» (Սահակայ Պարթևի՝ ԻԵ, ԼԱ), «Եւ ժողովրդականք հրաւիրեալք ի հաց պատարագին՝ մի՛ իշխեսցեն ճաշակել ի տունս իւրեանց պատճառաւ հիւրոց կամ գործակալաց» (Ներսէսի և Ներշապհոյ՝ ԻԳ) և այլն։

Այսպիսով, հայոց կանոնական իրավունքից բխում է, որ հետազոտվող դարաշրջանում հասարակության բոլոր դասային խմբերի շրջանում տունը այն հիմնական բառն էր, որն օգտագործվում էր իբրև ընտանիքին հոմանիշ հասկացություն։ Երբ ասում էին տուն, հասկանում էին լայն առումով ընտանիք,

այսինքն՝ առաջին հերթին փոքր անհատական և, հավանաբար, նաև մեծ ընտանիքը։

Կարևոր է նկատել, որ «Աւրէնք յաղթող թագաւորացում» ընտանիք հասկացությունն արտահայտելու համար օգտագործված են միայն տուն և ընտանի բառերը, այն էլ փոքր անհատական ընտանիքի իմաստով։ Ուշադրություն դարձնենք նրանից վերցված արտահայտությունների վրա. «զնոսա տուն», «ի տան առն», «էած ի տուն իւր բռզ կամ մանուկ, կամ գործեաց պղծութիւն հետ նորին ընտանեացն», «երբ հայրն կենդանի էր, պռուգօք եհան զնոսա ի տանէն (դուստրերին—Ս. Հ.) և այլն (տե՛ս 55, 64, 88, 89 հոդվածները)։

Հայոց կանոնագիրքը և «Աւրէնք յաղթող թագաւորացը» հաճախ «ընտանիք» բառի միջոցով արտահայտել են փոքր ընտանիքի գաղափար։ Առաջինում հանդիպում են հետևյալ արտահայտությունները՝ «հանդերձ ընտանեաւք» (Սահակայ Պարթեւի՝ ԼԲ), «կոծ չհրամայեաց դնել եւ ընտանիքն եդին... եւ մեռելոյն ընտանիք պատարագ մի արասցեն... մինչեւ ընտանիքն ի կարգ եկեսցեն», «եթէ յոստիկանի ի տան գտցի պղծութիւնն կամ ինքն եւ ընտանիքն... զընտանիսն կշտամբեսցեն», «ոմանք ընտանեաւք ի վանքն նստին» և այլն (տե՛ս Շահապիվանի՝ ԺԱ, Ի, Դվինի IV ժողովի՝ Ժ, Պարտավի՝ ԺԷ, ԺԸ, Ի, Աղվենի՝ Ը կանոնները)։

«Աւրէնք յաղթող թագաւորացում» հանդիպում են՝ «ընտանիք առն խնդրեն զայնս (նվերները— Ս. Հ.) ի կնոջէն», «զմիւս կէսն դարձուցանէ յընդանիսն ի մայրն կամ յեղբարսն կամ յայլ մերձաւոր ազգականս փեսային», «զոր տուին ընտանիք կնոջն գինք իրացն», «առանց կամաց իւր ընտանեաց» արտահայտությունները (տե՛ս 57, 62, 85 հոդվածները)։

Աղբյուրներում ոչ հազվադեպ հանդիպում է նաև ծուխ բառը։ Ծուխը առավել գործածական է եղել կանոնական աղբյուրներում։ Այն ընկալվել է իբրև ընտանիք, որի կրոնական արարողությունները հոգացել է որոշակի քահանան։ Այսպես, Դվինի IV ժողովի Ե կանոնում ասված է. «Մի՛ ըստ ծխոց բաժանեսցեն զշնորհն»։ Հովհան Մամիկոնյանը վկայում է, որ դեռևս Լուսավորչի ժամանակ քսան ավաններ և դաստակերտներ գրով հաստատված էին եկեղեցու վրա։ Պատմիչը բերում է նրանցից մի քանիսի անունները, ամենուրեք նշելով նրանցում եղած ծխերի թիվը[12]։

Բերված օրինակներից երևում է, որ ծուխը ընկալվել է իբրև տուն, երդ։ Ծուխը գյուղերում, ավաններում և դաստակերտներում գտնվող այն փոքր ու մեծ ընտանիքներն էին, որոնք ճանաչված էին իբրև կանոնա-իրավական հավաքական սուբյեկտ, որի նկատմամբ որոշակի հոգևոր առաջնորդը ստանձնում էր կանոնական իրավունքներ և պարտականություններ։ Նշելի փաստ է, որ «Աւրէնք յաղթող թագաւորացում» ծուխ բառը երբևէ չի հանդիպում։ Այս հանգամանքը մեկ անգամ ևս հավաստում է նրա կանոնա-իրավական ծագումը և կոչումը։

Հայոց պատմիչների երկերում, «Հայոց կանոնագրքում» ու «Աւրէնք յաղթող թագաւորացում» և այլ սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում են ազգ, տոհմ, ազգատոհմ բառերը։ Ի՞նչ աղերս ունեն դրանք մեծ ընտանիքի կամ գերդաստանի հետ։ Է. Կարապետյանի կարծիքով հայ միջնադարյան գրականու-

12 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատասիր. Ա. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 111—112։

թյան մեջ այդ բառերը գործածված են իբրև հոմանիշներ՝ արենակցական խմբի կամ միավորման նշանակությամբ։

Ազգը ընտանեկան-արենակցական խումբ էր։ Նրա կազմում հաշվվում էր տղամարդկանց գծով մի քանի, սովորաբար վեց-յոթ սերունդների ընտանիքներ՝ վայրընթաց և կողային ճյուղավորումներով։ Վաղ միջնադարում տոհմային միավորումների կազմալուծումը խորանալու պայմաններում տոհմային ընդհանրությունների կայուն հատկանիշներ չեն պահպանվել։ Եթե այդ ընդհանրությունները վաղ ֆեոդալական Հայաստանում հանդես էին գալիս որոշակի անուններով, ապա նրանք կրում էին քաղաքական խմբավորումների բնույթ։ Արդեն այս շրջանում արենակցական խմբերը տարբեր բաժանումներով կազմավորված տոհմային միավորումներ չէին, որոնց մի ժամանակ, հավանաբար, համապատասխանում էին տարբեր տերմիններ[13]։

Այս հետևություններն արդյոք չե՞ն հակասում նույն դարաշրջանի կանոնական և աշխարհիկ օրենսդրության սահմանումներին։ Թվում է՝ ոչ։ «Հայոց կանոնագրքում» հանդիպում են՝ «ազգ», «ազգական», «ազգատոհմ», «տոհմային ազգական», «ազգ և տոհմ», «ազգակցութեան իրաւունք» արտահայտություններ՝ որոշակի կանոնական իրավունքներ և պարտականություններ սահմանելու առնչությամբ (տե՛ս կանոնք Կղեմայ՝ ԼԶ, ԼԸ, Հ, Անտիոքայ՝ ԻԴ, Բարսեղի առ Ամփիլոքիոս՝ ԺԲ, ԾԱ, նույնի՝ «Վասն պէսպէս...»՝ ՄԺԵ, ՄԺԸ, Սահակայ Պարթևի՝ ԽԶ կանոնները)։ Նրանցից երևում է, որ «ազգ», «ազգական» ասելով հասկացել են արենակցական մերձավոր կապերով և որոշակի փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով շաղկապված անձանց որոշակի շրջան, այն է՝ ուղիղ վայրընթաց գծով III—IV աստիճանի ազգականներ (թոռ, ծոռ), կողային գծով՝ III—IV և այլ աստիճանի ազգականներ՝ որդիների և դուստրերի զավակները, հոր և կնոջ ամենամերձավոր հարազատները։ Այս հասկացության մեջ չէին մտնում փոքր ընտանիքի անդամները՝ ամուսինը, կինը, զավակները, որոնք միմյանց կոչում էին ոչ թե ազգական, այլ՝ հայր, մայր որդի, դուստր, որոնք միասին վերցրած կազմում էին ընտանիք։ Այս հետևության համար նեցուկ են հետևյալ արտահայտությունները՝ «Թերեւս կին եւ մանկունս ստացեալ ունիցի կամ ազգականս կամ ծառայս...» (Կղեմայ՝ ԼԸ), «...այլ եւ ընտանեաց եւ ազգականաց եւ եղբարց եւ որդւոց տացէ զիշխանութիւնս» (Անտիոքայ՝ ԻԴ), «ապա եթէ ոչ առցէ յանձն՝ ի տան իւրում նստցի, եթէ եղբարս ունիցի կամ քորս կամ այլ ինչ ազգատոհմ զոք, մինչեւ այցելութիւն եղիցի նմա ընտրութեամբ քահանայից» (Բարսեղի առ Ամփիլոքիոս՝ ԺԲ)։

«Ազգը» հետաքրքիր բառակապակցություններով է հանդիպում «Աւրէնք յաղթող թագաւորացում», այն է՝ «հօրեղբօր ազգն», «հայրենի ազգն», «յիւր ազգէ», «քերցն ազգն», «կանանց ազգն», «դստերաց ազգն», «մայրենի ազգն», «հայրենի ազգական», «մօր ազգական», «մերձաւոր ազգն», «մօտաւոր ազգն», «հեռի ազգականք» (տե՛ս 2, 3, 13, 51, 58, 90, 100, 144 և 148 հոդվ.)։ Այստեղ հիշյալ բառակապակցությունները հանդիպում են ավելի հաճախ, քան «տուն» և «ընտանիք» բառերը միասին վերցրած։ Նշելի է, որ նրանք արտահայտված են գլխավորապես այն հոդվածներում, որոնք կարգավորում են տղամարդկանց և կանանց սեփականության հարաբերությունները՝ ժառանգման և այլ

[13] Տե՛ս Э. Т. Карапетян, Родственная группа «Азг» у армян, էջ 19, 20։

դեպքերում։ Սեփականության իրավունքները կարգավորելու առնչությամբ հանդիպող «քրոջ ազգն», «կանանց ազգն», «դստերաց ազգն», «մայրենի ազգն» արտահայտությունները զորեղ ապացույց են, որ վաղ ֆեոդալական Հայաստանում ազգ ընտանեկան-արենակցական խումբը սեփականության հարաբերությունների ազդեցության ներքո ապրել է բարհշրջման ու փոփոխման խոր պրոցես։ Նշված դատաստանագրքում ազգ տերմինի՝ կանանց հետ աղերսվելը ցույց է տալիս, որ եթե առաջ ազգը տղամարդկանց գծով ուղիղ և կողային ճյուղավորումներով շաղկապված անձանց ընտանեկան-արենակցական խումբ էր, ապա վաղ ֆեոդալական շրջանում իր կազմով մնալով նույնը, սկսում է արտահայտել նաև կնոջ իրավունքը, «ազգի» սեփականության նկատմամբ։

Խոսելով գերդաստանի մասին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ բառը ամենևին չի հանդիպում «Աւրէնք յաղթող Թաղաւորացում», իսկ «Կանոնագիրք Հայոցում»՝ միայն մեկ անգամ (տե՛ս Աթանասի Աղեքսանդրացւոյ խէ կանոնը), այն էլ՝ ունեցվածքի առումով։ Այսպիսի պայմաններում հիմքեր չունենք մտածելու, որ վաղ ֆեոդալական Հայաստանում գերդաստանը արտահայտում էր մեծ ընտանիքի կամ ընտանեկան համայնքի դաղափարը։

Այսպիսով, վաղ ֆեոդալական Հայաստանի իրավահայտ աղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս, որ ընտանիք գաղափարը արտահայտվել է երդ, տուն, ընտանիք և ծուխ բառերի միջոցով։ Տունը և երդը խորհրդանշում էին մեծ և փոքր ընտանիքների դաղափարը։ Թեև տիրապետող ձևը եղել է փոքր անհատական ընտանիքը։ Հետազոտվող դարաշրջանում ընտանիքը ներկայանում է իբրև ամուսնության և արենակցական հարաբերությունների վրա խարբսխված հասարակական-տնտեսական միավոր, որի կազմի մեջ մտնող անդամները՝ առաջին հերթին ծնողները և զավակները, ապրում էին միասին, միատեղ հոգում ընտանիքի տնտեսականը և սերնդի վերարտադրությունը։

Ընտանիքի կազմը.— Հետազոտվող դարաշրջանում ընտանիքի տիրապետող ձևը եղել է փոքր անհատական ընտանիքը։ Ծնողներից և զավակներից կազմված ընտանիքը համատարած երևույթ էր։ Այն հասարակության հիմնական տնտեսական բջիջն էր քաղաքներում և գյուղերում։ Բուզանդը հետաքրքիր թվական տվյալներ է բերում պարսից Շապուհ արքայի կողմից հիմնովին բնաջնջված հայկական քաղաքների և դրանցից բռնի տեղահանված երդերի թվի մասին։ Այսպես, Հայաստանի մեծ քաղաքներ Արտաշատում և Երվանդաշատում երդերի թիվը համապատասխանաբար եղել են 49 և 50 հազար։ Հայաստանի այլ քաղաքներն ունեցել են՝ Վաղարշապատը՝ 19 հազար, Զարեհավանը՝ 13 հազար, Զարիշատը՝ 24 հազար, Վանը՝ 23 հազար, Նախիջևանը՝ 18 հազար երդ։

Երդերի այս թվերի օգնությամբ մենք կարող ենք մոտավոր պատկերացում կազմել ընտանիքի կազմի մասին, թե միջին հաշվով քանի հոգուց էր բաղկացած եղել քաղաքային ընտանիքը Հայաստանում։ Հնարավոր է, որ Բուզանդի կողմից բերված քաղաքային երդերի թվերը ինչ-որ չափով չափազանցված և կլորացված լինեն, թեև դա քիչ հավանական է մեզ թվում։ Պայմանականորեն ընդունենք, որ յուրաքանչյուր քաղաքային երդ բաղկացած էր միջին հաշվով 5—6 հոգուց։ Ստացվում է, որ IV դարում Հայաստանի մեծ քաղաքներ Արտաշատը և Երվանդաշատը ունեցել են 245—300 հազար բնակիչ, իսկ փոքր քաղաքներ Զարեհավանը և Վաղարշապատը համապատասխանաբար ունեցել են՝ 65—80 հազար և 95—104 հազար բնակչություն։ Ընտանիքի կազմի հա-

մար վերցված այս միջին թվերը մեզ անհավանական չեն թվում։ Նրանք անհավանական կդառնան, եթե գտնենք, որ քաղաքային երդերը բաղկացած էին 10—12 հոգուց։

Այսպես մտածելու հիմք են Տարոնի մի շարք գյուղերի երդերի կամ ծխերի թվի մասին Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի հաղորդած տեղեկությունները, որոնք նույնպես վերաբերում են IV դարին։ Այսպես, Զենոբ Գլակն ասում է, որ «Կուառս ունէր երդահամարս երեք հազար և երկոտասան... Եւ Տում ծուխս իննհարեւր... Եւ Խորնի ունի ծուխս հազար իննհարեւր և վեց... Իսկ Բրեխ ծուխս հազար վեցհարեւր և ութսուն... Իսկ Կետեղք երդս հազար և վեցհարիւր... Իսկ Բուղղու, որ թարգմանի բաղմաց կայեան, ծուխս երեք հազար և երկու հարիւր...»[14]։ Եթե ենթադրենք, որ հիշյալ գյուղական երդերը կամ ծխերը միջին հաշվով բաղկացած էին 6 հոգուց, ապա կստացվի, որ Կուառը ունեցել է 18072 բնակիչ, Տումը՝ 5400, Խորնին՝ 11436, Բրեխը՝ 9960, Կետեղքը՝ 9600, Բուղուն՝ 19200 բնակիչ։ Գլակի և Մամիկոնյանի կողմից բերված երդահամարների ճշտությունը որևէ կասկած չի հարուցում։ Դա երևում է նույն տեղում բերված այն թվերից, թե այդ գյուղերը որքան հեծյալ, հետևակ, տիգավոր և պարսավոր էին մատակարարում պատերազմի ժամանակ։ **Ընդունենք**, որ գյուղերում երդերի կազմը 1—2 մարդով ավելի է եղել քաղաքային ընտանիքներից, և այդ տվյալները համադրենք փոքր քաղաքների բնակչության թվի հետ։ Այս դեպքում դժվար չի լինի համոզվել, որ Բուղանդի թվական տվյալներին չի կարելի կասկածանքով վերաբերվել։ Եթե փորձենք գյուղական երդերի միջին կազմը ընդունել 10—12 հոգուց բաղկացած, ապա գյուղական երդերի թվերը կրկնապատվելու են՝ մոտենալով Հայաստանի փոքր քաղաքների բնակչության թվին։ Սակայն այսպես վարվելու համար մենք չունենք բավարար պատմական և իրավական հիմքեր։ Այդ բանում կարելի է համոզվել ստորև բերվող պատմական վկայություններից և իրավահայտ աղբյուրների վերլուծությունից։ Դիմենք նրանց։

Հայ պատմիչների մի շարք վկայություններից երևում է, որ իշխող դասի շրջանում տիրապետող էր փոքր անհատական ընտանիքը։ Նրանց ընտանիքը կազմված էր ծնողներից և մի քանի զավակներից։ Այսպես, մեզ հայտնի է, որ Հայոց Տիրան թագավորն ուներ երեք որդի (Արտաշես, Արշակ, Տրդատ) և, հավանաբար՝ մեկ դուստր։ Արշակ II-ը թողեց միայն մի ժառանգ (Պապ)։ Որդիներից հարուստ չէր նաև Պապ թագավորը, որն ուներ երկու զավակ (Արշակ, Վաղարշակ)։ Հայոց արքաների օրինակին հետևում էին նախարարական տները։ Այսպես, Մամիկոնյան և Կամսարական եղբայրների թիվը չէր անցնում 2—3-ից։ Ստ. Օրբելյանը նշում է, որ Սյունյաց տեր Վասակն «ունէր երկուս որդիս՝ Բաբիկ և Աստ-Ներսէհ անուն, և դուստր մի...»[15]։ Այլ առիթով նույն հեղինակը նշում է, որ Սյունյաց մեծ նահապետ Վասակն ուներ երկու որդի՝ Փիլիպպե և Սահակ։ Փիլիպպեն «թողու երիս որդիս՝ զԲաբդէն, զՎասակ և զԱշոտ»։ Սահակն ուներ մեկ ժառանգ՝ Գրիգոր անունով։ Վերջինս՝ երկու զավակ՝

---

14 Զենոբ Գլակ Ասորի, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 37։ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 111—112։

15 Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 58։

Վասակ (Գաբուռ) և Հրահատ անուններով և այլն[16]։ Մենք կարող ենք վկայություններ բերել և այլ իշխանական տներից, սակայն թվում է, որ կարելի է այսքանով բավարարվել։ Մեր այս կարծիքի ճշտությունը հիմնավորվում է նաև հայ կանոնական իրավունքի նորմերով։ Այսպես, Շահապիվանի ժողովի Ի կանոնում կարդում ենք. «Եթէ ի նախարարի տան գտցին պղծութիւքն, կամ կին նորա կամ դուստր կամ որդի կամ ինքն իսկ գլխովին, և ոչ զընտանիսն ի ձեռս տացէ եպիսկոպոսացն...»։ Այստեղ մեկ առ մեկ թվարկված է նախարարական ընտանիքի կազմը՝ հայր, մայր, դուստր և որդի։ Օրենսդիրը կարիք չի ունեցել այդ կազմի մեջ մտցնել այլ մերձավոր ազգականներին, ինչպիսին են՝ պապը, թոռները և այլք։

Փոքր անհատական ընտանիքը տիրապետող էր նաև հոգևոր դասի, հատկապես՝ հոգևոր ավագանու շրջանում։ Ադաթանդեղոսը, Բուղանդը, Խորենացին, Զենոբ Գլակը, Փարպեցին և այլք վկայում են, որ Գրիգոր Լուսավորիչն ուներ երկու որդի (Վրթանես, Արիստակես), Վրթանեսը՝ նույնպես երկու որդի (Գրիգորիս, Հուսիկ)։ Երկու որդի ուներ նաև քահանայապետ Հուսիկը (Պապ, Աթանագինես), իսկ Խադ եպիսկոպոսը՝ միայն երկու դուստր։ Միայն մեկ դուստր ուներ Ներսեսի որդի Սահակ կաթողիկոսը և այլն։ Նույն երևույթը, հավանաբար, արտահայտվել է հոգևոր դասի ստորին աստիճանավորների՝ քահանաների և սարկավագների շրջանում։ Դվինի IV ժողովի Ը կանոնից երևում է, որ եկեղեցու ժառանգավորները ոչ հաղվադեպ անորդի էին և նրանց իրավունք վերապահվեց որդեգրելու մերձավոր ազգականների զավակներին՝ ժառանգական ունեցվածքը նրանց փոխանցելու համար։

Այստեղ չենք կարող անտեսել մի կարևոր հանգամանք ևս։ Բանն այն է, որ երկրում գործող օրենքի համաձայն (ի դեպ, այդ օրենքը հարգվում էր նաև օտար նվաճողների կողմից) հոգևորականները ազատված էին հողային հարկերից, նրանցից վերցվում էր միայն արքունական հասը (տե՛ս Դվինի IV ժողովի Թ կանոնը)։ Անհավանական չի լինի կարծել, որ հոգևորականների ամուսնացած զավակները, հավանաբար, հաճախ չէին բաժանվում հայրական ծխից՝ հարկերից ազատվելու համար։ Ուզում ենք ասել, որ հարկային օրենսդրությունը ներգործում էր ընտանիքի կազմի վրա, նպաստում էր ընտանիքի բազմանդամությանը։ Հավանաբար այս էր պատճառներից մեկը, որ երկրի մարմնավոր տերերը աշխատում էին հոգևորականներին հարկատու դարձնել և մկրատել նրանց արտոնությունները։

Ցավոք, խիստ սակավ են շինականների ընտանիքի կազմի վերաբերյալ պատմական նյութերը։ Երջանիկ բացառություն է Զենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի տեղեկությունը Տարոնի մի շարք գյուղերի երդերի թվի վերաբերյալ։ Շինականների ընտանիքները հավանաբար բաղկացած էին 6—7 հոգուց, թեև չենք բացառում նրանց առավել բազմազավակությունը։ Բայց բազմազավակությունը և մեծ ընտանիքը կամ գերդաստանը նույնացվել չեն կարող, քանզի նրանք միանգամայն տարբեր հասկացություններ են։

Առավել անմխիթար է ծառա-աղախինների ընտանիքի կազմի վերաբերյալ մեր պատկերացումը։ Հայտնի է, որ նրանք տիրոջ թույլտվությամբ ընտանիք կազմելու իրավունք ունեին։ Բայց քանի որ նրանք իրենց զավակների տերը չէին և տնտեսապես ու սոցիալապես շահագրգռված չէին բազմազավակության

16 Նույն տեղում, էջ 296—297։

խնդրում, ուստի ծառա-աղախինների ընտանիքները չէին կարող ավելի բազմանդամ լինել, քան շինականների ընտանիքները։

Ինչո՞վ բացատրել, որ երկրի տնտեսապես և քաղաքականապես իշխող նախարարների և ազատների դասակարգը աչքի չէր ընկնում բազմազավակությամբ։ Այդ բանի գլխավոր պատճառը սեփականության հարաբերություններն էին, հայրենական կալվածքները և անվանի ընտանիքի նյութական հզորությունը չմասնատելու ձգտումը։

Վերոգրյալից կարելի՞ է, արդյոք, եզրակացնել, որ հետազոտվող դարաշրջանում մեծ ընտանիք կամ գերդաստան՝ իբրև ընտանիքի ձև, գոյություն չի ունեցել։ Ամենևին էլ ոչ։ Այն գոյություն է ունեցել իբրև տարածված վերապրուկ, թեև դարաշրջանի պատմիչները մեզ չեն տրամադրում նրանց վերաբերյալ կոնկրետ նյութեր։ Ամուսնացած եղբայրների՝ իրենց փոքր ընտանիքներով ծնողների հետ միատեղ ապրելը՝ իբրև մեկ միասնական տան անդամներ, այնքան էլ հազվադեպ երևույթ չի եղել։ Սակայն ծնողների մահով, եղբայրների բաժանմամբ, այդպիսի ընտանիքները, ոչ հազվադեպ, տարրալուծվում էին միմյանցից տնտեսապես անկախ փոքր ընտանիքների։ Եղբայրների այս իրավունքը արտահայտվել է «Աւրէնք յաղթող թագաւորացի» 113 հոդվածում, որն օրինականացնում էր եղբայրների միջև հայրենի ժառանգության բաժանման հնարավորությունը։ Նահապետական իրավունքի առավել ցայտուն դրսևորում էր նույն հուշարձանի 137 հոդվածը, որն իրավունք էր տալիս տան դլխի (գուցե և արական անդամի) փոխառության պարտավորության դիմաց գանձումը տարածել հարսների պռոյգի վրա։ Այնտեղ ասված է. «Եւ իւր կնոջ պռուգսն և հարսինն դնին ի պարտսն, և թէ շատ են հարսունքն, զառաջնոյն առնուն, որ եկեալ էր ի տանն, թէ այդու չվճարի՝ ապա զերկրորդինն»։ Նահապետական մեծ ընտանիքի անդամների գույքային հարաբերությունների կարգավորմանը նվիրված «Աւրէնք յաղթող թագաւորացի» հատ ու կենտ հոդվածները վկայում են, որ մեր ժողովրդի առավել վաղ պատմական անցյալում գերդաստանը եղել է ընտանիքի ինքնուրույն և տարածված ձև։ Այդ ընտանիքի անդամների հարաբերությունները կարգավորվել են յուրահատուկ իրավական նորմերով, որոնց լոկ մասունքներն են պահպանվել «Աւրէնք յաղթող թագաւորացում»։

Ընտանիքի ֆունկցիաները.— *Ընտանիքի՝* սերունդ վերարտադրելու ֆունկցիան *ընդհանուր է բոլոր հասարակական ֆորմացիաների համար։ Մարքսն ասում է. «Իրենց սեփական կյանքը ամեն օր նորից վերարտադրող մարդիկ սկսում են արտադրել այլ մարդկանց, բազմանալ. այդ՝ ամուսնու և կնոջ, ծնողների և զավակների միջև հարաբերությունը՝ ընտանիք է»*[17]։ *Ընտանիքի կազմի մասին խոսելիս մենք առիթ ունեցանք նկատելու, որ ընտանիքի տիրապետող ձևը վաղ ֆեոդալական Հայաստանում եղել է ոչ բազմանդամ փոքր անհատական ընտանիքը։ Նկատելի է, որ այս դարաշրջանում մասնավոր սեփականության շահերը այնքան են գերադասվել, որ դրանից ծնվել է սերնդի վերարտադրության ֆունկցիան և հակասություն է ստեղծվել վերջինիս և մասնավոր սեփականության շահերի պահպանման միջև։ Վաղ ֆեոդալական Հայաստանի մարմնավոր և հոգևոր տերերի սակավազավակ լինելը ապացույց է այն բանի, որ մարդկանց բնական հարաբերությունները, մասնավորապես՝*

[17] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. III, М., 1955, էջ 27։

սերնդի վերարտադրությունը, աղավաղվել են մասնավոր սեփականության օրենքների ազդեցության ներքո։ Սերնդի վերարտադրության ֆունկցիան առաջին հերթին սերտորեն աղերսված էր դարաշրջանի տնտեսական և տոցիալական պայմաններով։ Թեև նախարարները և հոգևոր առաջնորդներն իրենց ձեռքում կենտրոնացրել էին հասարակության նյութական բարիքները և մարդկանց՝ իբրև ծառա-աղախիններ, և նրանք կարող էին հոգալ սերնդի վերարտադրության հետ կապված բազմապիսի հոգսերը, բայց քանի որ մասնավոր սեփականության շահերը նախապատվելի էին այլ շահերի համեմատ, ուստի և այն լուրջ խոչընդոտ էր սերնդի բազմացմանը և բազմազավակությանը։ Զավակները հայրական սեփականության նկատմամբ ունեին հավասար ժառանգական իրավունքներ։ Որքան շատ էին ժառանգորդները, այնքան մեծ էր հայրական տիրույթը տրոհվելու վտանգը։ Այդ վտանգից խուսափելու և միաժամանակ սերնդի վերարտադրությունը չվտանգելու համար կար մեկ ճանապարհ՝ սերնդի վերարտադրության խնդիրը լուծված համարել 3—4 զավակներ ունենալուց հետո։

Սերնդի վերարտադրության վրա խիստ բացասաբար է անդրադարձել նաև դարաշրջանի կրոնական գաղափարախոսությունը։ Հայտնի է, որ քրիստոնեական կրոնը խրախուսում էր մենակյաց կյանքը, հավատացյալ կանանց ու տղամարդկանց կուսությունը, վանական կյանքը, իսկ կանոնական իրավունքն իր հերթին ներգործության զանազան միջոցներ էր սահմանում ուխտազանց կանանց և տղամարդկանց համար, արգելքներ էր սահմանում հոգևորականների ամուսնության համար և այլն։

IV դարում, Սերսես կաթողիկոսի օրոք, Հայաստանի մի շարք գավառներում գործում էին կուսանոցներ։ Ամուսնության դեմ ուղղված կրոնական պատկերացումները երկրում ընդունել էին վտանգավոր չափեր։ Սերնդի վերարտադրությանը հասցվող վնասը այնքան մեծ էր, որ Պապ թագավորը հարկադրված էր միջամտել և ավերել բոլոր գավառներում կառուցված կուսանոցները, իսկ կույսերին հրամայվեց ամուսնանալ՝ հանուն որդեծնության և սերնդի վերարտադրության։ Ուշագրավ է այն փաստը, որ Գանդրայում եկեղեցական ժողովի հավաքված հոգևոր առաջնորդները հատուկ ուղերձ ընդունեցին՝ ուղղված հայոց եպիսկոպոսներին, որով նրանք դատապարտում էին այն հավատացյալներին, որոնք արհամարհում էին պսակը, խորշում ամուսնացած երեցներից, կուսություն պահում՝ ամուսնությունը գարշելի համարելու պատրվակով, իրենց բարձր էին դասում ամուսնացածներից և այլն։ Այս արատավոր գաղափարախոսության հետևանքով մեծապես խանգարվեց սերունդ վերարտադրելու ընտանիքի և մարդու բնական կոչումը և հայ հասարակությունը այդ բանից կրեց շոշափելի վնասներ։

Սերնդի վերարտադրությանը խանգարող մյուս լուրջ պատճառը Հայաստանի անկայուն քաղաքական կացությունն էր, անկախության համար տևական պատերազմները, երկրի ասպատակությունները, քաղաքների և գյուղերի ոչնչացումը, նրանց բնակիչների բռնի վերաբնակեցումները և այլն։

Հավանաբար Հայաստանի մարմնավոր տերերը երկրի անկախության և նախարարական տների շահերից ելնելով ներգործության որոշ միջոցների էին դիմում ազատների, շինականների և ծառա-աղախինների շրջանում սերնդի վերարտադրությունը խրախուսելու համար։ Այս գործում ըստ երևույթին որո-

շակի դեր է խաղացել դարաշրջանի աշխարհիկ իրավունքը։ Ազատներին և շինականներին հողեր պարգևելը, գանձագին սեփականության իրավունքից և հողի վարձակալության իրավունքից նրանց օգտվելը նպաստելու էին նեղ ընտանեկան շահերով առաջնորդվող ազատներին և շինականներին ավելի մեծ կարևորություն տալու սերնդի վերարտադրությանը և բազմազավակությանը։ Այդպիսի դիրքորոշումը չպետք է խորթ լիներ հատկապես այն ընտանիքների համար, որոնք չունենալով ծառա-աղախիններ՝ իբրև աշխատուժ, իրենց տընտեսությունը աշխատող ձեռքով ապահովելու համար շեշտը դնում էին զավակների թվի վրա։ Ինչպես երևում է «Աւրէնք յաղթող թագաւորացից», խրախուսվում էին նաև ծառա-աղախինները. սրանց համար խրախուսման միջոց էր ազատություն շնորհելը, ինչքի, ստացվածքի և ամուսնանալու իրավունք վերապահելը և այլն՝ սերնդի վերարտադրությանը նպաստելու համար։ Փոխարենը՝ տերերը ոչ միայն ցանկացած ձևով շահագործում էին ծառա-աղախիններին, այլև տնօրինում էին նրանց զավակներին։ Այսպիսով, եթե իշխող դասակարգերը նախապատվությունը տալիս էին մասնավոր սեփականության շահերին, երկրորդական դիրքեր մղելով ընտանիքի վերարտադրության խնդիրը, ապա սեփականազուրկ դասերն իրենց սոցիալական դրության պատճառով ընդհանրապես շահագրգռված չէին սերնդի վերարտադրությամբ։ Այստեղ սերընդի վերարտադրությունը քաջալերվում էր ներգործության և խրախուսման պանազան միջոցներով։

Ընտանիքի համար կարևորագույն նշանակություն ուներ նաև տնտեսական ֆունկցիան։ Վաղ ֆեոդալական Հայաստանում տնտեսապես և քաղաքականապես իշխող շահագործողական ընտանիքները դրան առաջնակարգ նշանակություն էին տալիս։ Այսպիսի ընտանիքներում տնտեսական հարաբերությունների հիմքում դրվում էին նյութական հաշիվները կամ մասնավոր սեփականության շահը։ Մասնավոր սեփականության կուտակման և նրա օրենքների բացասական ներգործության հետևանքով այլանդակվում էին ամուսինների և մերձավոր ազգականների հարաբերությունները։ Այն ամենը, ինչ բնականից գեղեցիկ էր ու մարդկային, բայց հակասում էր մասնավոր սեփականության շահերին՝ անընդունելի և մերժելի էր ճանաչվում։ Նախարարների և ազատների դասակարգի համար ընտանիքի տնտեսական ֆունկցիան առաջին հերթին հետապնդել է շահագործման և հարստության կուտակման նպատակ։ Այսպիսի ընտանիքների սպառողական կարիքները թեև չէին թերագնահատվում, բայց ունեին երկրորդական նշանակություն։ Այս ֆունկցիային ծառայելու համար ընդունվում էին բազմապիսի աշխարհիկ և կանոնական իրավանորմեր, որոնք նպատակ ունեին կարգավորելու ամուսինների, ծնողների և զավակների, ինչպես նաև ընտանիքի այլ մերձավոր ազգականների սեփականության հարաբերությունները։ Այստեղ՝ նախարարների, ազատների և շինականների ընտանիքներն իրենցից ներկայացնում էին ինքնուրույն տնտեսական միավորներ, որոնցից յուրաքանչյուրն առաջնորդվում էր տվյալ ընտանիքի նեղ տնտեսական շահերով։ Զափազանց կարևոր նշանակություն ուներ տնտեսական ֆունկցիան հատկապես նախարարների և ազատների դասակարգի համար։ Հասարակության մեջ նրանց ուժն ու դիրքը առաջին հերթին պայմանավորված էր նրանց ընտանիքների տնտեսական հնարավորություններով։ Ընտանիքի տընտեսական շահերին ենթարկվում էին դարաշրջանի ամուսնական իրավունքը և ընտանիքի ներսում գույքային հարաբերությունների կարգավորումը։ Թեև

ամուսինները ընտանիքի ողջ գույքի նկատմամբ ունեին բաժան սեփականության իրավունք և ընտանիքի նյութական կարիքների մասին հոդայը ճանաչված էր ամուսնու պարտականությունը, բայց ամուսինները տնտեսությունը վարում էին միասնաբար։

Շինականների դասին պատկանող ընտանիքները հասարակության հիմնական տնտեսական միավորն էին։ Նրանց վրա նույնպես ուժեղ չափով ներգործում էին մասնավոր սեփականության հարաբերությունները և տնտեսական հաշիվները, սակայն, այնուհանդերձ, այստեղ տնտեսական ֆունկցիան գլխավորապես ուներ սպառողական բնույթ։ Շինականների մանր տնային տնտեսության համար բնորոշ չէր ուրիշի աշխատանքը շահագործելը, ընտանիքի անդամների անձնական և գույքային հարաբերությունները ինչ-որ չափով ազատ էին հարստության կուտակման և մասնավոր սեփականության քայքայիչ ազդեցությունից։

Ծառա-աղախինների ընտանիքների համար տնտեսական ֆունկցիան ուներ միանգամայն երկրորդական նշանակություն։ Այսպիսի ֆունկցիա իրականացնելու համար անհրաժեշտ էր լինել սեփականության իրավունքի ինքնուրույն սուբյեկտ սեփականատիրոջը շնորհված իրավազորություններով, մինչդեռ քաջ հայտնի է, որ ծառա-աղախինները ոչ միայն չունեին այդ իրավունքը, այլ առուծախի, փոխանակման և այլ գործարքների օբյեկտ էին տերերի համար։ «Աւրէնք յաղթող թագաւորացից» երևում է, որ միայն տիրոջ բարեհաճությամբ ծառա-աղախինները կարող էին ընտանիք կազմել և ունենալ որոշ գույք։ Սակայն այսքանը բավական չէ, կարծելու, թե ծառա-աղախինների ընտանիքը իրականացնում էր բավարար չափով տնտեսական ֆունկցիա։ Ծառա-աղախնի ընտանիքը ինքնուրույն տնտեսական միավոր չէր, թեև նրանց սպառողական նպատակով առանձնացվում էր որոշ գույք, իրավունք վերապահվում կնքելու ինչքային գործարքներ և այլն։

Ընտանիքի հաջորդ կարևոր ֆունկցիան անող սերնդի դաստիարակությունն է։ Այդ ֆունկցիայի իրականացման հնարավորությունը սերտորեն աղերսված էր ամուսինների սոցիալ-տնտեսական պայմաններով։ Միանգամայն տեղին է նկատել Վարդան Հացունին, որ դաստիարակության բոլոր բարիքները վայելելու բախտը վիճակված էր ազնվականներից սերված զավակներին[18]։ Պատմական, եկեղեցական և իրավահայտ աղբյուրները վկայում են, որ իշխող դասակարգերը մեծ կարևորություն էին տալիս սերնդի դաստիարակությանը, այդ ֆունկցիան իրականացնում էին անձամբ և դայակության ու խնամակալության-հոգաբարձության ինստիտուտների միջոցով։

Դայակությունը Հայաստանում լայնորեն կիրառվող սովորութա-իրավական հաստատություն էր, որից օգտվելու իրավունքն ազատանու դասային արտոնությունն էր։ Սերնդի դաստիարակության, ինչպես և խնամարկյալի ինչքային իրավունքները պաշտպանելու նպատակ էին հետապնդում խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ աշխարհիկ և կանոնական նորմերը։

Դայակությունից օգտվում էին անդամ ոչ մեծ նախարարական տները, որոնք իրենց որդիներին հանձնում էին բարեկեցիկ ազատների դաստիարակությանը։ Դայակները ջանք չէին խնայում այդ հեղինակավոր պարտականությունը

18 Վարդան Հացունի, Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 9—10։

պատվով կատարելու, սանին նախարարական տան և հայրենիքի շահերին նվիրվածության, պապենական ավանդույթները և կրոնը պաշտպանելու, շահագործվող շինականներին ու ծառա-աղախիններին սանձած պահելու ոգով դաստիարակելու համար։ Երբ համեմատում ենք իշխանական տան երկսեռ մանուկների նկատմամբ իրականացվող դաստիարակությունը, չենք կարող չնշել, որ թեև մեծ ուշադրություն էր դարձվում իշխանական տան իգական զավակների դաստիարակությանը, այնուհանդերձ, հասարակության մեջ տիրապետող սեռերի անհավասարությունը, որն ըստ ամենայնի դրսևորվում էր նաև տիրող դասակարգի շրջանում, իր կնիքն էր դնում կանանց դաստիարակության, գաղափարախոսության, մեթոդի և ծավալի վրա։ Դեռատի իշխանուհու գիտակցության մեջ արմատավորվում էր կնոջ և տղամարդու անհավասարության գաղափարը, որը ծնում էր սեռերի խոր անտագոնիզմ։

Շատ ավելի բնական ու պարզունակ էր դաստիարակության ֆունկցիայի գործադրումը շինականների ընտանիքում։ Այստեղ տնտեսական պատճառներով անգործադրելի էր երեխաների դայակությունը և ծնողներն էին իրենց զավակների բնական դաստիարակն ու խնամակալը՝ մինչև նրանց չափահաս դառնալը։ Այստեղ ևս զավակները դաստիարակվում էին՝ առաջնորդվելով ընտանիքի տնտեսական շահերով, սեռերի անհավասարության, երկրի մարմնավոր տերերին հնազանդվելու, հայրենիքին ու կրոնին նվիրվածության ոգով։

Դաստիարակության բարիքները վայելելուց միանգամայն զուրկ էին ծառա-աղախիններից սերված երեխաները։ Ծառա-աղախինների անձնապես անազատ լինելը, նրանց զավակներին ուզած ձևով տնօրինելու ազնվականության իրավունքը, նրանց տնտեսական ծանր պայմանները՝ նվազագույնի էի հասցնում դաստիարակության ֆունկցիայի իրականացման հնարավորությունը։ Ծառա-աղախիններից ծնված երեխաների ամենամեծ դաստիարակը նրանց սոցիալական դրությունն էր և կյանքի պայմանները, որոնք անազատից սերվածի արյան մեջ առաջին հերթին ներարկում էին տիրոջը հնազանդվելու և շահագործման լուծը խոնարհաբար տանելու գաղափարը։

ФОРМЫ, СОСТАВ И ФУНКЦИИ СЕМЬИ В РАННЕФЕОДАЛЬНОЙ АРМЕНИИ

С. А. ОГАНЕСЯН

(Резюме)

Согласно материалистическому пониманию истории, классовому обществу соответствует новая форма семьи—индивидуальная, или малая семья, как основная хозяйственная единица общества.

Как свидетельствуют армянские правовые и исторические первоисточники («Армянская книга канонов», «Законы побеждающих царей»), понятие малой семьи города и деревни выражали термины: ընտանիք (ынтаник)—семья, տուն (тун)—дом, երդ (ерд)—дом, ծուխ (цух)—дым.

В правовых источниках наиболее часто встречаются слова «ынтаник» и «тун», под которыми подразумевалась вообще семья, главным образом малая, индивидуальная, а также, по-видимому, и большая семья В канонических источниках часто употребляется термин «цух», под которым подразумевалась семья, с одной стороны, как единица налогового

облажения, а с другой — ячейка, обслуживание религиозных обрядов которой было канонической обязанностью и правом определенного священника.

Идею большой семьи, или семейно-родственной группы, выражало слово ազգ (азг). Эта форма семьи, под воздействием отношений собственности, переживала процесс распада.

Анализ фактического и правового материала эпохи показывает, что малая семья состояла только из родителей и детей. Такая семья была основной общественно-хозяйственной ячейкой в городах и селах Армении, в среде светской и духовной знати, азатов (свободных), а также эксплуатируемых шинаканов и цара-агахинов (слуг).

Основными функциями малой семьи являлись: воспроизводство рода, хозяйственная функция и функция воспитания подрастающего поколения. Интересы частной собственности подавляли функцию воспроизводства рода, поэтому возникало противоречие между этой функцией и охраной частной собственности. Свидетельством такого противоречия являлась малодетность семей светских и духовных хозяев страны.

Важнейшей была хозяйственная функция семьи, в основу которой ставились материальные расчеты, эксплуатиция и накопление богатства. Потребительские интересы класса нахараров и азатов были малозначны. Для семей несвободных хозяйственная функция имела второстепенное значение, ибо их семьи не являлись самостоятельными единицами общества.

Для воспитательной функции семьи решающее значение имели социальное положение и условия жизни.

Светская и духовная знать придавала большое значение воспитанию подрастающего поколения, осуществляя эту функцию как лично, так и через институты даякутян (кормильства), опеки и попечительства. Между тем отсутствие личной свободы у цара-агахинов (слуг), их тяжелое экономическое положение сводило к минимуму эту функцию в их семьях.